Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *“Համակարգչագիտություն և*

⁹ Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

համակարգչային քիմիա” և “Մասնագիտության արդի հիմնախնդիրներ”։ Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր կրթամասին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը։

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/M09	Համակարգչագիտություն և համակարգչային քիմիա	3	24/8/0	I	Քննություն
01/M20	Մասնագիտության արդի հիմնախնդիրներ	3	32/0/0	I	Քննություն

Մասնագիտական պարտադիր կրթամաս

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ։ Կրթամասի ընդհանուր աշխատաժամվալը ծրագրում սահմանված է 47 կրեդիտ։ Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը։ Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները։

Մագիստրոսական ծրագիր՝

«Դեղագիտություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
03/M02	Սինթետիկ դեղերի քիմիա	3	32/0/0	I	Քննություն
03/M05	Բնական միացությունների քիմիա	3	32/0/0	II	Քննություն
03/M07	Կենսաքիմիա և դեղագիտություն	3	32/0/0	II	Քննություն
03/M08	Դեղագրքային անալիզ	3	48/0/0	II	Քննություն
03/M11	Բժշկական և դեղագործական ապրանքագիտություն	3	32/0/0	III	Քննություն
03/M14	Ֆարմակոգնոզիա, գալենային պրեպարատներ	3	32/0/0	II	Քննություն
03/M19	Դեղագործական կենսատեխնոլոգիա	3	32/0/0	II	Քննություն
03/M21	Դեղագիտական քիմիայի փորձնական դասընթաց	3	32/0/0	II	Քննություն
03/M22	Դեղագիտական քիմիա-1	3	32/0/0	I	Քննություն

03/M22	Դեղագիտական քիմիա-2	3	32/0/0	II	Քննություն
03/M23	Դեղաբանություն-1	3	32/0/0	II	Քննություն
03/M23	Դեղաբանություն-2	3	32/0/0	III	Քննություն
03/M23	Դեղաբանություն-2	3	32/0/0	III	Քննություն
03/M26	Դեղարտադրության որակի կառավարում (GLP,GMP)	3	32/0/0	II	Քննություն
03/M31	Դեղերի տեխնոլոգիա	3	32/0/0	I	Քննություն
03/M12	Օրգանական քիմիա	3	32/0/0	I	Քննություն
03/M30	Դեղագիտական մանրէաբանություն	3	32/0/0	II	Քննություն
15/M 53	Ֆարմացիայի մարքեթինգ		32/0/0	III	Քննություն

Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավար ծրագրում սահմանափակված է 12 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 1-ին կիսամյակի ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավար պետք է կազմի առնվազն 6 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական (կուրսային) աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա և մագիստրոսական թեզ:**

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն,ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն,

ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության բոլոր կիսամյակներում:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 3-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 3-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 15 կրեդիտ աշխատաժամալ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Դեղագործական քիմիա» ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի «Դեղագիտություն» մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհիվ ու որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

03/M02. Սինթետիկ դեղերի քիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգով սովորող "Դեղագիտություն"

մասնագիտության ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել ժամանակակից բժշկության մեջ կիրառվող այն դեղամիջոցների վերաբերյալ, որոնք ստացվում են սինթետիկ ճանապարհով: Նպատակն է ծանոթացնել սինթետիկ դեղերի քիմիայի ընդհանուր հիմունքներին, առարկայի խնդիրներին, այդ բնագավառում արդի ձեռքբերումներին, տալ տեղեկություններ ուսումնասիրության մոտեցումների և մեթոդների մասին, ցույց տալ կապը դեղագիտական քիմիայի, դեղաբանության, կենսաքիմիայի, դեղագործության հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանա օրգանական ծագման դեղամիջոցների ստեղծման հիմնական մոտեցումները և սկզբունքները; օրգանական ծագման որոշ առավել կիրառվող դեղամիջոցների դեղաբանական խմբերի սինթետիկ մեթոդները, քիմիական հատկությունները, դեղաբանական ակտիվությունը

2. Կկարողանա գտնել և վերլուծել կապը օրգանական դեղանյութի կառուցվածքի և քիմիական հատկությունների միջև, ինչպես նաև կապը մոլեկուլի կառուցվածքի և դեղաբանական ակտիվության միջև; իրականացնել փորձարարական հետազոտություններ ստացած գիտելիքների հիման վրա

3. Կտիրապետի սինթետիկ դեղերի քիմիայի բնագավառում արդի ձեռքբերումներին; օրգանական դեղանյութի ստեղծման ընդհանուր սկզբունքներին, ժամանակակից օրգանական սինթետիկ եղանակներին: պայմաններ, կիրառություն:

Բովանդակությունը.

N	Բաժինը, թեման	Պարապմունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Հալոգենալկաններ	2	1		Ուսանողը <u>կիմանա</u> հալոգենալկանների մասին /կառուցվածք, սինթեզ/ որպես ընդհանուր ներշնչական նարկոզի միջոցների
	Հալոգենալկանները որպես ընդհանուր ներշնչական նարկոզի (անզգայացման) միջոցներ: Քլորէթիլ, ֆտորոտան, վերջինիս անալոգները,				

	<p>քլորոֆորմ: Մինթեզը, ֆիզիկո-քիմիական հատկությունները: Դեղաբանական ակտիվություն, կիրառություն:</p>				
Թեմ ա 2	<p>Բժշկության մեջ կիրառվող ալիֆատիկ սպիրտներ, ալդեհիդներ, պարզ եթերներ, նիտրատներ</p>	3	1		<p>Ուսանողը կկարողանա տարբերակել ալիֆատիկ շարքի որոշ դեղամիջոցները ըստ կառուցվածքի և դեղաբանական ակտիվության</p>
	<p>Բժշկության մեջ կիրառվող ալիֆատիկ սպիրտներ և ալդեհիդներ (էթիլ սպիրտ, ֆորմալդեհիդ, ուրոտրոպին, քլորալիդրատ): Մինթեզը, քիմիական և ֆիզ.-քիմ. հատկությունները: Դեղաբանական ազդեցություն, կիրառություն:</p> <p>Դիէթիլ եթեր: Մինթեզը, քիմիական և ֆիզիկո-քիմիական հատկությունները:</p> <p>Դեղաբանական ազդեցություն, պահպանման պայմաններ, կիրառություն: Նիտրատները որպես հականոցիներ դեղամիջոցներ: Նիտրոզլիցերին. ստեղծման պատմությունը: Մինթեզ, քիմ., ֆիզ.-քիմ. հատկություններ: Այլ նիտրատներ: Դեղաբանական ազդեցություն, կիրառություն:</p>				

Թեմա 3	Դիարիվնեթանային կառուցվածքի հակահիստամինային ակտիվությամբ օժտված դեղամիջոցներ	2		Ուսանողը <u>կիմանա</u> հակահիստամինային դեղամիջոցներ դիմեդրոլի, կլեմաստինի սինթեզի, ակտիվության և կիրառության մասին
	Դիմեդրոլ, կլեմաստին: Կառուցվածք, սինթեզ, դեղաբանական ակտիվություն, կիրառություն:			
Թեմա 4	Ֆենոլաթթուների շարքի դեղամիջոցներ: Սալիցիլաթթվի ածանցյալներ	2	1	Ուսանողը <u>կծանոթանա</u> սալիցիլատների ստացման, հակաբորբոքային և ցավազրկող հատկությունների հետ, <u>կկարողանա</u> գնահատել դրանց կիրառության սահմանափակությունները
	Ֆենոլաթթուների շարքի հակաբորբոքային և ցավազրկող դեղամիջոցներ (սալիցիլաթթու, ացետիլսալիցիլաթթու, ածանցյալներ): Սինթեզ, քիմիական և դեղաբանական հատկություններ, կիրառություն, կողմնակի բացասական ազդեցություն:			
Թեմա 5	Արիլալկիլամինների և արիլօքսի-3-ամինոպրոպանոլի խմբերի դեղամիջոցներ	4	1	Ուսանողը <u>կիմանա</u> ադրենալինի և ածանցյալների, ինչպես նաև ատենոլոլի շարքի դեղաբանական ակտիվության, սինթեզի մասին, կկարողանա օրգ. միացության

					բանաձևում գտնել ասիմետրիկ կենտրոններ
	Արիլալկիլամինների շարքի դեղամիջոցներ: Ադրենալին՝ սինթետիկ, քիմիական, դեղաբանա- կան հատկություններ, դերը օրգանիզմի կենսա- գործունեության համար: Ադրենալինի սինթետիկ անալոգներ. Նորադրենա- լին, էֆեդրին, դեղաբա- նական ազդեցություն, կիրառություն: Օպտիկա- կան իզոմերիա: Մինթե- տիկ անալոգներ. կառուց- վածք, օպտիկական իզո- մերներ, դեղաբանական ակտիվություն, կիրա- ռություն: Ատենոլոլ, պրոպրանո- լոլ: 1-Արիլօքսի-3-ամի- նոպրոպանոլի շարքի այլ միացություններ՝ ադրենապաշարիչ ակտիվությամբ: Մետոպրոլոլի սինթեզը:				
Թեմ ա 6	Ոչ ստերոիդային հակաբորբոքային և ցավազրկող դեղամիջոցներ (NSAIDs)	2	1		Ուսանողը կիմանալ պրոպիոնաթթվի , քացախաթթվի, պ-ամինոֆենոլի, պիրազոլոնի ածանցյալների ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոցների (NSAIDs) սինթեզը, քիմիական, դեղաբանական ակտիվությունը
	Պրոպիոնաթթվի և քացա- խաթթվի շարքի ոչ ստե- րոիդային հակաբորբո- քային և ցավազրկող դե- ղամիջոցներ: Իբուպրո-				

	<p>Ֆեն, դիկլոֆենակ, ինդոմետացին: Մինթեզ, քիմ., դեղաբանական ակտիվություն: պ-Ամինոֆենոլի ածանցյալներ՝ պարացետամոլ, ֆենացետին ջերմիջեցնող և ցավազրկող ազդեցությամբ: Պիրազոլոնի շարքի հակաբորբոքային և ցավազրկող դեղամիջոցներ (անտիպիրին, ամիդոպիրին, անալգին և այլն.): Մինթեզ, դեղաբանական ակտիվություն, կողմնակի բացասական ազդեցություն:</p>				
Թեմ ա 7	<p>Ամինոտետրային և ամիդային խմբերի տեղային անզգայացնող դեղամիջոցներ</p>	2	1		<p>Ուսանողը <u>կիմա-նա</u> ամինոտետրային և ամիդային խմբերի տեղային անզգայացնող դեղամիջոցների սինթեզի, դեղաբանական ակտիվության մասին, <u>կկարողանա</u> համեմատել այդ խմբերի անետետիկների հատկությունները</p>
	<p>պ-Ամինոբենզոյական թթվի (ՊԱԲԹ-ի) ալկիլ-ամինոտետրային խմբի տեղային անզգայացնող դեղամիջոցներ նովոկային, անետեզին, դիկային, նովոկայինամիդ: Նովոկայինի սինթեզը, կայունությունը, դեղաբանական ակտիվությունը:</p> <p>Ամիդների (անիլիդների) խմբի տեղային անզգա-</p>				

	<p>յացնող միջոցներ (լիդոկային, տրիմեկաին, այլ դեղամիջոցներ): Մինթեզ, դեղաբանական ակտիվություն:</p>				
Թեմ ա 8	<p>Ամինոալկանոլների էսթերներ</p>	2			<p>Ուսանողը կյուրացնի որոշ ամինոալկանոլների էսթերների սինթեզի մեթոդները, քիմիական, դեղաբանական ակտիվությունը, կիրառությունը</p>
	<p>Արիլալիֆատիկ թթուների և ամինոալկանոլների էսթերներ՝ սպազմոլիտին, արպենալ, գանգլերոն, մետացին և խոլինոլիտիկ ակտիվությամբ օժտված այլ միացություններ: Դիթիլին /մկանային ռեկաքսանտ/: Ազդեցություն, սինթեզ:</p>				
Թեմ ա 9	<p>Սուլֆանիլամիդներ</p>	2			<p>Ուսանողը կյուրացնի սուլֆանիլամիդների սինթեզի ընդհանուր սխեման, ազդեցության մեխանիզմը</p>
	<p>Սուլֆանիլամիդներ. Մինթեզի ընդհանուր սխեման: Ազդեցության մեխանիզմը: Օրինակներ. ստրեպտոցիդ, սուլֆացիլ, սուլֆադիմեզին, սուլֆադիմեթոքսին, նոթ-սուլֆազոլ և այլն:</p>				
Թեմ ա 10	<p>Իզոնիկոտինաթթվի շարքի հակատուբերկուլյոզային դեղամիջոցներ: <i>պ</i>-Ամինոսալիցիլաթթու (ՊԱՍԹ)</p>	2	1		<p><u>Կստանա</u> տեղեկություն հակատուբերկուլյոզային դեղամիջոցների 2 խմբերի մասին: <u>Կիմանա</u> իզոնիազիդի,</p>

					<p>Ֆտիվազիդի սինթեզի մեթոդները, կիրառությունը:</p> <p><u>Կկարողանա</u> վերլուծել <i>ա</i>-ամինոսալիցիլաթթվի (ՊԱՍԹ) հակատուբերկուլյոզային ակտիվության մեխանիզմը:</p>
	<p>Իզոնիկոտինաթթվի շարքի հակապալարախտային (հակատուբերկուլյոզային) դեղամիջոցներ: Իզոնիազիդ, ֆտիվազիդ և այլն: Սինթեզ, կիրառություն: <i>ա</i>-Ամինոսալիցիլաթթու (ՊԱՍԹ), սինթեզ, հակապալարախտային (հակատուբերկուլյոզային) ակտիվությունը: Բեպասկ, սինթեզ:</p>				
Թեմ ա11	<p>Պիպերիդինի շարքի ցավազրկող, <i>γ</i>-ամինոկետոնների շարքի նեյրոլեպտիկ ազդեցությամբ դեղամիջոցներ</p>	2			<p><u>Կստանա</u> տեղեկություն պիպերիդինի շարքի ցավազրկող, ինչպես նաև <i>γ</i>-ամինոկետոնների շարքի նեյրոլեպտիկ ազդեցությամբ դեղամիջոցների մասին</p>
	<p>Պիպերիդինի շարքի ցավազրկող միջոցներ՝ պրոմեդոլ, ֆենտանիլ և այլ միացություններ: <i>γ</i>-Ամինոկետոնների շարքի դեղամիջոցներ. Հալոպերիդոլ, մետադոն: <i>γ</i>-Ամինոբուրոֆեոնների սինթեզի ընդհանուր սխեման, դեղաբանական ակտիվությունը:</p>				
Ընդամենը՝ 32 ժամ, 25 ժամ դասախոսություն, 7 ժամ սեմինար		25	7		

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

03/M 05. Բնական միացությունների քիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ծրագրի **նպատակն է՝** ուսումնական գործընթացում "Դեղագիտություն" մասնագիտության ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել բժշկության մեջ առավել կիրառվող բնական ծագման միացությունների մի քանի կարևոր խմբերի (ալկալոիդներ, աինաթթուներ, հակաբիոտիկներ), դրանց ստացման մեթոդների, քիմիական հատկությունների, ինչպես նաև ուսումնասիրության մեթոդների, տվյալ բնագավառում արդի ձեռքբերումներին մասին: Նպատակներից է բացահայտել կենսաբանորեն ակտիվ բնական միացությունների տեղը կենսորգանական քիմիայի, դեղաբանության, կենսաքիմիայի, բժշկության և դեղագործության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Գիմանա

1.1 բնական ծագման դեղամիջոցների դասակարգման, ուսումնասիրման սկզբունքները,

1.2 բնական ծագման միացությունների ստացման մեթոդները՝ (բնական հումքից անջատում, սինթեզի ժամանակակից եղանակներ),

1.3 ուսումնասիրվող բնական միացությունների հիմնական դեղաբանական ազդեցության և բժշկության մեջ կիրառության մասին,

2. Կկարողանա

2.1 վերլուծել կապը բնական ծագման օրգանական միացությունների կառուցվածքի (այդ թվում՝ օպտիկական իզոմերների) և դեղաբանական ակտիվության միջև;

2.2 իրականացնել փորձարարական հետազոտություններ ստացած գիտելիքների հիման վրա:

3. Կտիրապետի

3.1 բնական ծագման օրգանական միացությունների քիմիայի բնագավառում արդի ձեռքբերումներին,

3.2 բնական ծագման օրգանական դեղանյութի ստեղծման ընդհանուր սկզբունքներին, ժամանակակից սինթեզի և անալիզի մեթոդներին:

Բովանդակությունը.

N	Բաժինը, թեման	Պարապմունքի տիպը ժամերի թիվը			Վերջնարդյունքը
		դասախոսություն	սեմինար, գործընկաց	ինքն-ընթաց	
	Բաժին առաջին: Ալկալոիդներ				
Թեմա 1	Ներածություն: Ալկալոիդների ընդհանուր բնութագիրը: Պիրիդինի, պիպերիդինի և պիրրոլի շարքի ալկալոիդներ	3	1		Կիմանան ալկալոիդների սահմանումը, բնութագրությունը
Թեմա 2	Խինոլիզինի և խինոլինի խմբերի ալկալոիդներ	2	1		Կճանոթանան խինոլիզինի և խինոլինի խմբերի ալկալոիդների հետ
Թեմա 3	Բովիդազոլի և ինդոլի խմբերի ալկալոիդներ:	2			Կստանան տեղեկություններ

					Իմիդազ ոլի և ինդոլի կառուցվ ածքի ալկալոի դների մասին
Թեմա 4	Իզոխինոլինի ալկալոիդներ. բենզիլիզոխինոլինի խումբ, ֆենանտրենիզոխինոլինի խումբ	2			Կիմանան իզոխինոլ ինի ալկալոիդ ների կառուցվ ածքը, ազդեցութ յունը
Թեմա 5	Տրոպանի և պուրինի (կսանտինի) խմբերի ալկալոիդներ	2	1		Կստանան տեղեկույթ ուններ տրոպանի և պուրինի խմբերի ալկալոիդն երի մասին
	Բաժին երկրորդ: Ամինաթթուներ				
Թե մա 6	Ամինաթթուներ. ընդհանուր տեղեկու թյուններ: -Սպիտակուցային հիմնական ամինա թթուներ, օրինակներ: -Ամինաթթուների ցվիտտեր-իոնային բնույթը, թթվային-հիմնային հատկու թյունները: Օպտիկական իզոմերիա:	2	1		Կստանան ընդհանու ր գիտելիքն եր սպի տակուցա յին հիմնակա ն ամինա թթուների մասին
Թե մա 7	Ամինաթթուների սինթեզի եղանակ ները: Ամինաթթուների քիմիական հատկությունները, որակական ռեակ ցիաները: Պեպտիդներ, պեպտիդային կապի ստեղծման եղանակները:	2	1		Կիմանան ամինաթթ ուների սինթեզի հիմնակա ն եղանակն երը, պեպտիդ ային կապի ստեղծմա ն եղանակն

					երը:
Թեմա 8	Ամինությունները որպես դեղամիջոցներ: Բժշկության մեջ կիրառվող բնական ամինությունները և սինթետիկ ածանցյալները:	2			Կիմանան բժշկության մեջ կիրառվող բնական ամինությունների մասին տեղեկություններ
	Բաժին երրորդ: Հակաբիոտիկներ				
Թեմա 9	Հակաբիոտիկների ընդհանուր բնութագիրը: Դասակարգումը՝ ըստ ազդեցության սպեկտրի և քիմիական կառուցվածքի:	1			Կստանան գիտելիքներ հակաբիոտիկների մասին, դասակարգման մասին
Թեմա 10	β-Լակտամային հակաբիոտիկներ՝ պենիցիլիններ, ցեֆալոսպորիններ (բնական և կիսասինթետիկ): Տետրացիկլինների շարքի հակաբիոտիկներ (բնական և կիսասինթետիկ):	3	1		Կիմանան β-լակտամային հակաբիոտիկների ստացման եղանակները և հատկությունները
Թեմա 11	Լևոմիցետին, սինթեզը, օպտիկական ակտիվությունը: Մակրոլիդների խմբի հակաբիոտիկներ:	2	1		Կիմանան Լևոմիցետինի սինթեզի եղանակը, մակրոլիդների կառուցվածքը
Թեմա 12	Ամինոգլիկոզիդների խմբի հակաբիոտիկներ: Լինկոզամիդներ՝ լինկոմիցին, կլինդամիցին:	1	1		Կիմանան ամինոգլիկոզիդների և լինկոզամիդների կառուցվածքը,

					կիրառու թյունը
ԸՆԴՊԱՄԵՆԸ՝ ժամ, կրեդիտ		24	8		

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
4. Առաջին միջանկյալ	0-4
5. Երկրորդ միջանկյալ	0-4
6. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

03/M07. Կենսաքիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգային գիտելիքներ հաղորդել կենսաքիմիա գիտության ընդհանուր հիմունքների, առարկայի նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների, կենսաքիմիայի բնագավառում ներկա ձեռքբերումների մասին, տալ դրա կապը մի շարք դիսցիպլինների (նյարդաբանության, նյարդաքիմիայի, ֆիզիոլոգիայի, մոլեկուլային կենսաբանության, բժշկության), այդ թվում նաև դեղագործության և դեղաբանության հետ: Դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են կենսաքիմիայի տեսական հիմունքներին, օրգանիզմների կենսագործունեության պրոցեսների հիմքում ընկած ընդհանուր սկզբունքներին, կենսամոլեկուլների փոխանակության ընդհանուր ուղիներին, պատկերացում են կազմում կյանքի մոլեկուլային հիմքի, կենդանի օրգանիզմների գործունեությունը ապահովող կառուցվածքների և

մեխանիզմների մասին, հասկանում են կենսաքիմիայի կիրառական դերը դեղագործության ոլորտում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա, որ կենսաքիմիան գիտություն է կյանքի մոլեկուլային հիմքի մասին, կրմբոնի օրգանիզմների կենսագործունեությունը ապահովող կառուցվածքների և մեխանիզմների առանձնահատկությունները:

2. կհասկանա կենսաքիմիա գիտության կապը, դերն ու ազդեցությունը այլ դիսցիպլինների, այդ թվում նաև դեղագործության և դեղաբանության վրա, նորովի կընկալի կենսաքիմիայի ներկա ձեռքբերումները:

3. կկարողանա մեկնաբանել նոր սինթեզված և փորձարկվող դեղամիջոցների ազդեցությունը այս կամ այն մետաբոլիկ ուղու վրա; իրականացնել պրակտիկ հետազոտություններ ստացած գիտելիքների հիման վրա:

Բովանդակությունը.

N	Բաժինը, թեման	Պարապմունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Մեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	Ներածություն. Կենսաքիմիա առարկան	1			Ուսանողը կձանոթանա ինչ է իրենից ներկայացնում կենսաքիմիա գիտությունը:
	ԿԵՆՍԱՍՈՒԷԿՈՒԼՆԵՐ				
Թեմա 2	Ածխաջրեր	3	1		Ուսանողը կտիրապետի գիտելիքներին ածխաջրերի վերաբերյալ և կձանոթանա ածխաջրերի կիրառությանը դեղագործության մեջ:
Թեմա 3	Սպիտակուցներ, Ֆերմենտներ	4	1		Կձանոթանա սպիտակուցների և ֆերմենտների գործունեությանը և սպիտակուցային տիպի դեղամիջոցներին, կիմանա ֆերմենտների ակտիվության կարգավորման մասնակցող դեղամիջոցները:
Թեմա	Ճարպեր	2	1		Կտիրապետի

4					գիտելիքների կենդանի օրգանիզմում ճարպերի դերի և ֆունկցիայի վերաբերյալ, կկարողանա տարբերակել ստերոիդային դեղամիջոցները:
Թեմա 5	Վիտամիններ և միկրոէլեմենտներ	1		1	Կհարստացնի գիտելիքները վիտամինների և միկրոէլեմենտների մասին, կկարողանա օրգանիզմին անհրաժեշտ ճիշտ վիտամիններ ընտրել:
	ՆՑՈՒԹԱՓՈՒՍԱՆԱԿՈՒԹՅ ՈՒՆ				
Թեմա 6	Ածխաջրերի նյութափոխանակությունը	5		1	Կծանոթանա գլյուկոզի կատաբոլիզմի կենտրոնական ուղուն, բջջային շնչառությանը, էլեկտրոնների տեղափոխման շղթային, դրանց մասնակցող ֆերմենտների կարգավորմանը, նաև սպեցիֆիկ դեղամիջոցների կիրառմամբ:
Թեմա 7	Ճարպերի նյութափոխանակությունը	3		1	Կհասկանան ինչպես է տեղի ունենում կենդանիների հյուսվածքներում ճարպաթթուների β-օքսիդացումը, դրա կարգավորումը և դեղագործների առջև ծառայած խնդիրները:
Թեմա 8	Ամինաթթուների նյութափոխանակությունը	3		1	Կտիրապետեն ինֆորմացիայի ամինաթթուների փոխակերպման ընդհանուր ուղիների, տրանսամինազների կլինիկական նշանակության, ամինաթթուների օքսիդատիվ ճեղքման 3 հնարավոր դեպքերին, միզանյութի ցիկլին, ազոտային փոխանակության

					Ժառանգական դեֆեկտներին:
Թեմա 9	Հորմոններ	2		1	Կծանոթանան օրգան համակարգերի հորմոնների առանձնահատկությունն երին, դրանց կապին սպեցիֆիկ ռեցեպտորների հետ: Կիմանան ստերոիդային հորմոնները: Կտարբերակեն հորմոնային տիպի դեղամիջոցները:
Ընդամենը՝ 32 ժամ, որից		24	6	2	

**ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
7. Առաջին միջանկյալ	0-4
8. Երկրորդ միջանկյալ	0-4
9. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

03/M08 . Դեղագրքային անալիզ (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ծրագրի նպատակն է ուսումնական գործընթացում "Դեղագործական քիմիա" մասնագիտության ուսանողին համակարգված գիտելիքներ հաղորդել բժշկության մեջ կիրառվող դեղապրեպարատների որակի վերահսկման ժամանակակից եղանակների մասին: Ամփոփ գիտելիքներ հաղորդել դրանցում խառնուրդների առկայության փորձարկման, հիմնական բաղադրիչների իսկության հաստատման ու քանակական որոշման դեղագրքով երաշխավորված եղանակների և մեթոդների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանա բժշկության մեջ կիրառվող միացությունների, դեղերի, դեղաբանական պրեպարատների ու հումքի որակի վերահսկման, դրանցում խառնուրդների առկայության փորձարկման, հիմնական բաղադրիչների իսկության հաստատման ու քանակական որոշման հնարավորությունների ու եղանակների մասին:

2. Կկարողանա առարկայի ծրագրի շրջանակներում դեղանյութերի որակի վերահսկման եղանակների ու հնարավորությունների մասին ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների հիման վրա ինքնուրույն ինֆորմացիա գտնել, համակարգել գիտելիքները, վերլուծել, ինքնուրույն աշխատել անհրաժեշտ մեթոդների և տեխնոլոգիաների գործնական կիրառմամբ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դեղամիջոցների որակը կարգավորող պետական սկզբունքները և դրույթները: Դեղամիջոցների որակի վերահսկողության պետական համակարգը: Անալիտիկական հետազոտությունների դերը նոր դեղերի ստեղծման գործում: ՉՏՓ-երի մշակման կարգը և բովանդակությունը: **Թեմա 2՝** Պետական դեղագիրք (\$արմակոպեա): Ընդհանուր դեղագրքային հոդված (ԸԴՀ): Դեղագրքային հոդված (ԴՀ): Միջազգային դեղագիրք (ՄԴ): Պետական դեղագրքում օգտագործվող հիմնական հասկացություններ և տերմիններ: **Թեմա 3՝** Դեղերի որակի վերահսկումը քիմիա-դեղագործական ձեռնարկություններում, վերահսկող-անալիտիկ լաբորատորիաներում և դեղատներում: Դեղագործական անալիզի ժամանակակից եղանակները: **Թեմա 4՝** Դեղագործական անալիզի յուրահատկությունները, հիմնական չափանիշները: Դեղանյութերի ճանաչման ընդհանուր սկզբունքները: Դեղանյութերի իսկության հաստատման ֆիզիկական եղանակները: **Թեմա 5՝** Անօրգանական դեղանյութերի իսկության հաստատման քիմիական եղանակները: Կատիոնների և անիոնների նստեցման եղանակ: Օքսիդավերականգնման ռեակցիաների եղանակ: Չեզոքացման եղանակ: Անիոնների քայքայման և բոցի գունավորման եղանակներ: **Թեմա 6՝** Դեղանյութերի որակի փորձարկումները: Դեղանյութերի անորակության պատճառները: Դեղանյութերի որակի փորձարկման ընդհանուր պահանջները: Անօրգանական իոնների խառնուրդների առկայության ընդհանուր փորձարկումներ՝ 1.

Ցնդող նյութերի և խոնավության որոշումը 2. Միջավայրի pH-ի որոշումը: **Թեմա 7** Դեղաձևերի որակի գնահատման ընդհանուր սկզբունքները: Դեղանյութերի բարոբակության հաստատումը ըստ որոշ ֆիզիկական և քիմիական հատկությունների: Յուրատեսակ խառնուրդների հայտնաբերումը: Դեղանյութերի քանակական որոշման հիմնական եղանակները: **Թեմա 8** Դեղանյութերի քանակական որոշման ֆիզիկական և քիմիական եղանակները. 1.Կշռային անլիզ 2.Նստվածքային տիտրում 3. Թթվահիմնային տիտրում 4. Տիտրում ոչ ջրային միջավայրերում 5. Վերօքս տիտրում 6. Կոմլեքսոնոմետրիկ տիտրում: **Թեմա 9**՝ Օրգանական բնույթի դեղամիջոցներ, դրանց անալիզի առանձնահատկությունները, օրգանական պրեպարատների անալիզի եղանակները: Օրգանական միացությունների (ալիֆատիկ և արոմատիկ միացությունների օրինակներով) կառուցվածքի և կենսաբանական ակտիվության փոխադարձ կապը: **Թեմա 10**՝ Էլեմենտօրգանական դեղապրեպարատների իսկության հաստատումը: Օրգանական դեղապրեպարատների իսկության հաստատման եղանակները: **Թեմա 11**՝ Օրգանական նյութերին բնորոշ ընդհանուր քիմիական ռեակցիաներ.

1. Նիտրման և նիտրոզացման ռեակցիաներ: 2. Դիազոտացման և ազոգուզակցման ռեակցիաներ: 3. Հալոգենացման և դեհալոգենացման ռեակցիաներ: 4. Սուլֆուրացման և դեսուլֆուրացման ռեակցիաներ: 5. Կարբոնիլային միացությունների կոնդենսման ռեակցիաներ: 6. Էսթերացման, ացիլման և հիդրոլիզի ռեակցիաներ: 7. Ամինների և ամիդածանցյալների քայքայման ռեակցիաներ: 8. Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ:

Թեմա 12 Օրգանական դեղապրեպարատների քանակական որոշման ընդհանուր եղանակները:1. Արծաթաչափություն 2. Թթվա-հիմնային տիտրում ջրային և ոչ ջրային լուծույթներում 3. Օքսիդա-վերականգնման եղանակներ 4. Գազաչափական անալիզ 5. Էլեմենտ-օրգանական անալիզ 6. Անալիզի ֆիզ-քիմ եղանակներ և այլն: **Թեմա 13**՝ Առանձին դեղագրքային հոդվածների քննարկումներ՝ նատրիումի քլորիդ, ջրածնի պերօքսիդ, նատրիումի նիտրիտ, յոդ, նատրիումի թիոսուլֆատ, կալիումի պերմանգանատ, էթիլ սպիրտ, ֆորմալդեհիդ, ասպիրին, անալգին:

ԱՌԱՐԿՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ

քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած
ակտիվության բաղադրիչ,

- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
10. Առաջին միջանկյալ	0-4
11. Երկրորդ միջանկյալ	0-4
12. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**03/M11 Բժշկական և դեղագործական
ապրանքագիտություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ
գնահատումով դասընթաց*

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության տեսության, ոլորտին վերաբերվող առանձնահատկությունների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության ոլորտի գործունեության ընթացքում անհրաժեշտ մեթոդների գործնական կիրառման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Շանթօացնել կումերցիոն ապրանքագիտության տեսական հիմունքներին:

2.Պատկերացում տալ ապրանքների և ապրանքային շուկայի առանձնահատկությունների մասին:

3.Ներկայացնել դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության գործնական խնդիրները և նրանց լուծումները:

4.Շանթօացնել դեղերի և բուժտեխնիկայի ասորտիմենտի ձևավորման և փոփոխման գործընթացներին :

5.Ներակայացնել դեղերի և բուժտեխնիկայի ապրանքագիտության կիրառական ոլորտը:

Բովանդակությունը.

N	Թեմայի և բաժնի անվանումը	Պարապմունքի տիպը ժամերի թիվը

		դասախոսություն	սեմինար, գործնական	ինքնուրույն
Թեմա 1	Ապրանքագիտության առարկան	2		
Թեմա 2	Դեղագործ - ապրանքագետի կողմից լուծվող հիմնական խնդիրները	4		
Թեմա 3	Դեղերի պրանքագիտական փորձագիտություն	2		
Թեմա 4	Ապրանքների կոմերցիոն փորձագիտություն	2		
Թեմա 5	Մաքսային փորձագիտություն	4		
Թեմա 6	Դեղերի և բուժտեխնիկայի ապրանքային ինֆորմացիա	2		
Թեմա 7	Բժշկական նշանակության ապրանքների ապրանքագիտական բնութագիրը դասակարգումը	4		
Թեմա 8	Դեղերի տեսականին	2		
Թեմա 9	Դեղերի գրանցումը	2	2	
Թեմա 10	Դեղերի կեղծման հիմնախնդիրները	2		
Թեմա 11	Դեղատուն և Դեղատնային գործունեություն	2	2	
ԸՆԴԱՄԵՆԸ` 32 ժամ, 3 կրեդիտ				

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
13. Առաջին միջանկյալ	0-4
14. Երկրորդ միջանկյալ	0-4
15. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

03/M14 . Ֆարմակոգնոզիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգային գիտելիքներ հաղորդել ֆարմակոգնոզիա գիտության ընդհանուր հիմունքների, առարկայի նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների, ֆարմակոգնոզիայի բնագավառում ներկա ձեռքբերումների մասին, տալ դրա կապը մի շարք գիտությունների (քիմիայի, բժշկության, բուսաբանության, դեղագործության) հետ: Դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են ֆարմակոգնոզիայի տեսական հիմունքներին, բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերի, դրանց գործող կենսաբանորեն ակտիվ նյութերի կառուցվածքի ,ակտիվության և օգտագործման հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Կիմանա

1.1 ֆարմակագնոզիա գիտության և առարկայի խնդիրները,

1.2 պաշտոնական բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերի անունները, նրանց գործող /ակտիվ/ նյութերը,

1.3 բուսական կենսաբանորեն ակտիվ միացությունների կառուցվածքային /քիմիական/ տեսակները, դրանց

հատկությունները և կիրառումը /որպես դեղամիջոցների գործող նյութերի/,

2. Կկարողանա

2.1 իմանալ դեղաբույսերից պատրաստվող՝ գալենային և նորգալենային դեղաձևերը, դրանց տեսակները, պատրաստումը և օգտագործումը

2.2 մասնագիտորեն գրագետ օգտվել գրականությունից,

2.3 մատուցել անհաժեշտ մասնագիտական տեղեկություններ,

2.4 կիրառել ընկալած գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեևա 1՝ Ճարպայուղեր և շաքարներ պարունակող դեղաբույսերը, հումք՝ տեղեկություն 11 դեղաբույսերի մասին /դրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածք, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևա 2՝ Վիտամինային դեղաբույսեր և հումք՝ տեղեկություն 12 դեղաբույսերի մասին /դրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածքը, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևա 3՝ Եթերային յուղեր պարունակող դեղաբույսեր՝ տեղեկություն 11 դեղաբույսերի մասին /նրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածք, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևա 4՝ Սրտային գլիկոզիդներ պարունակող դեղաբույսեր և հումք՝ տեղեկություն սրտային գլիկոզիդների կառուցվածքային և ակտիվության առանձնատկությունների և 8 դեղաբույսերի մասին /դրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածքը, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևա 5՝ Սապոնինային դեղաբույսեր՝ տեղեկություն սապոնինների մասին և 9 դեղաբույսերի մասին /դրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածքը, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևա 6՝ Պարզ ֆենոլային միացություններ պարունակող 8 դեղաբույսերի, նրանց ակտիվ նյութերի մասին:

Թեևա 7՝ Ֆլավոնոիդային միացությունների և նրանց պարունակող 12 դեղաբույսերի մանրամասն տեղեկությունների մասին:

Թեևա 8՝ Անտրախինոնային, լիգնանային միացությունների քիմիական և կենսաբանական հատկությունները, այդպիսի նյութեր պարունակող 8 դեղաբույսերի մասին /նրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածքը, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևա 9՝ Դաբաղային նյութեր պարունակող 10 բույսերի և հումքի մասին / նրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածքը, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևաներ 10, 11 և 12՝ Ալկալոիդներ պարունակող 24 բույսերի մասին /դրանց անունները՝ հայերեն, լատիներեն, բուսական ընտանիքը, մորֆոլոգիական կառուցվածքը, դեղահումքը, ակտիվ նյութերը, կիրառումը/:

Թեևաներ 13 և 14՝ Գալենային և Նորգալենային դեղաբուսական հումքից

պատրաստվող դեղաձևերը, դրանց տեսակները, պատրաստման և ուսումնասիրման մեթոդները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի բանավոր ներկայացման, իսկ մյուսը՝ գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4;3;3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

03/M 19 Դեղագործական կենսատեխնոլոգիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.: Ծրագրի նպատակն է՝ պատկերացում տալ կենսատեխնոլոգիայում օգտագործվող պրոկարիոտ և էուկարիոտ օրգանիզմների գեների ակտիվության կարգավորման, նրանց կլոնավորման գործիքների, ռեցիպիենտ օրգանիզմում էասպրեսիայի, նրանց արգասիքների անջատման և մաքրման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Կիմանա

Ապագա դեղագետը ձեռք կբերի գիտելիքներ մանրէաբանական եղանակով հակաբիոտիկների, ամինաթթուների վիտամինների, սպիտակուցների կենսասինթեզի, մարդու գեների կլոնավորման ճանապարհով նոր ռեկոմբինանտ դեղեղամիջոցների ստացման եղանակների ինչպես նաև հիբրիդոմների միջոցով մոնոկլոնալ հակամարմինների ստացման և նրանց կիրառման ոլորտների վերաբերյալ:

2.Կկարողանա կիրառել ստացված գիտելիքները կենսադեղամիջոցների և կենսաակտիվ պատվաստուկների արտադրությունում, ինչպես նաև դրանց առաքման և վաճառքի ոլորտներում:

3. Կտիրապետի մանրէաբանական եղանակով հակաբիոտիկների, վիտամինների, էնզիմների և ռեկոմբինանտ սպիտակուցների կենսասինթեզի, մաքրման, պահպանման և վարվելակարգի մեթոդներին:

N	Բաժինը, թեման	Պարապմունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնա րոյունք
		Դասախոս ություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2			

	Կենսատեխնոլոգիայի բնութագիրը, զարգացման փուլերը՝ էմպերիկ, խնորման էթիոլոգիայի բացահայտում, հակաբիոտիկների արտադրություն և գենային ինժեների-ռեկոմբինանտ կենսադեղամիջոց-ների վերահսկելի արտադրություն				
Թեմա 2	Պրոկարիոտ ու էուկարիոտ միկրոօրգանիզմներ	2	2	2	
	կիրառությունը կենսատեխնոլոգիայում: Բջջիչների կառուցվածքը, կորիզը, գենոմնրը քրոմոսոմներ, նուկլեոիդներ, պլազմիդներ բազմացման եղանակները: Գենոմների ռեպլիկացիան, մոզաիկ գեներ՝ էկզոն, ինտրոն: Սպիտակուցների կենսասինթեզը: Կենսաբանության կենտրո-նական դոգման՝ տրանսկրիպցիա, սպլայսինգ (էուկարիոտների մոտ), տրանսլյացիա: Գենետիկական կոդը:				
Թեմա 3	Գեների ակտիվության կարգավորումը	2		2	
	Պրոմոտոր, օպերատոր, կառոցվածքային գեներ, ստոպ կոդեր, տերմինատոր, էնհանսեր, սայլենսեր: Գենի էքսպրեսիայի կարգավորուման ձևերը՝ դրական, բացասական, կոնստիտուտիվ: Օպերոն, ռեգուլոն և համընհանուր (գլոբալ) կարգավորման համակարգեր: Կատարուիկ ռեպրեսիա:				
Թեմա 4	Գենի կլոնավորումը	2	2		
	Գենային ինժեներիա: Գենի կլոնավորումը: Գենի կլոնավորման գործիքները՝ պրայմեր, հակադարձ տրանսկրիպտազ, ռեստրիկտազներ, լիզազ, մոլեկուլային վեկտոր, Tag-պոլիմերազ, ՊՇՌ (պոլիմեր շղթայական ռեակցիա): կԴՆԹ-ի կենսասինթեզը և քիմիական սինթեզը: Կլոնավորված գենի				

	ակտիվության կարգավորումը Վեկտորի ներմուծումը ռեցիպիենտ բջիջ՝ էլեկտրապորացիա և քեմապորացիա: Ռեկոմբինանտ միկրոօրգանիզմների մեկուսացումը:				
Թեմա 5	Կլոնավորված գեների էքսպրեսիան: Ռեկոմբինանտ սպիտակուցների կենսասպինթեզը, անջատումն ու մաքրումը:	2	2	2	
	Ռեկոմբինանտ միկրոօրգանիզմների բազմացումը և նպատակային նյութի կենսասպինթեզը: “Ներառուկներ”-ի (Inclusion bodies) անջատումը, տարրալուծումը, ռեկոմբինանտ սպիտակուցների դիալիզը և ակտիվ մոլեկուլի ձևավորումը: Մաքրումը աֆին կամ իմունոաֆին եղանակներով: Սպիտակուցային պատրաստուկների N և C վերջույթների սեքվինավորումը:				
Թեմա 6	Ռեկոմբինանտ ինսուլինների ստացումը	2	2		
	Հասուն ինսուլինը կողավորող ԴՆԹ-ի ստացման և կլոնավորման մեթոդները: Ինսուլինի մուտեինների՝ լիզպրոի, ասպարտի, գլարգինի առանձնահատկությունները, ստացումը: Ինսուլինի առանձին և խառը դեղաձևերը:				
Թեմա 7	Մարդու Աճի հորմոն, սոմատոստատին, արտազատման գործոն, արյան մակարդան գործոններ	2			
	կԴՆԹ-ների սինթեզը, կլոնավորումը և էքսպրեսիան: Ռեկոմբինանտ մոլեկուլների անջատումն ու մաքրումը:				
Թեմա 8	Ցիտոկիններ՝ ինտերլեյկիններ,	2			

	ինտերֆերոններ Ինտերլեյկինների և α, β, γ ինտերֆերոնների գեների կլոնավորումը, էքսպրեսիան ռեցիպիենտ բջիջներում, կենսասինթեզը անջատումը, մաքրումը և կիրառության ոլորտները:				
Թեմա 9	Մոնոկլոնալ հակամարմիններ Իմունոգլոբուլիններ: Տրանսգեն կենդանիներ, իմունիզացում, հումանիզացված և քիմերային իմունոգլոբուլինների գեները, B-լիմֆոցիտների և միելոմայի բջիջների միաձուլումն ու հիբրիդոմների սելեկցիան, պահպանումը և մոնոկլոնալ հակամարմինների արտադրությունը:	2			
Թեմա 10	Ռեկոմբինանտ պատվաստանյութեր: Գենային թերապիա: Գենային կոնստրուկտների ձևավորումը, փոխադրման միջոցները՝ միկրոներարկիչներ, գենային ատրճանակ, վիրուսներ և գենի ինտգրացիան:	2			
Ընդամենը՝ 32 ժամ , որից դասախոսություն 24 ժամ, _8_սեմինար և ___գործնական:					

ԱՌԱՐԿԱՅԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր թեստեր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
16. Առաջին միջանկյալ	0-4
17. Երկրորդ միջանկյալ	0-4

18. Եզրափակիչ քննություն	0-10
--------------------------	------

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

03/Մ 21 Դեղագիտական քիմիայի փորձնական դասընթաց (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Օրագրի նպատակն է՝ ամբողջական դարձնել Դեղագիտական քիմիա առարկայի դասավանդման գործընթացը: Օրագրում ընդգրկված գործնական աշխատանքների միջոցով ուսանողները կձանոթանան դեղամիջոցների ինքնության ինչպես նաև մաքրության որոշման մի շարք եղանակների հետ: Օրագիրը նպատակ ունի նաև ուսանողներին ծանոթացնելու որոշ դեղամիջոցների սինթեզի եղանակների հետ: Օրագիրը կազմվելու ժամանակ օգտագործվել են որոշ դասագրքերի, գիտամեթոդական գրականության տվյալները և ՀՀ ԳԱԱ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում գործնական աշխատանքների կազմակերպման փորձը: Սինթեզների դեպքում ընտրվել են այն եղանակները, որոնց դեպքում օգտագործվում են մատչելի նյութեր:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Գիմանա

- 1.1 դեղանյութերի ինքնության որոշման եղանակները,
- 1.2 դեղանյութերի մաքրության որոշման եղանակները,
- 1.2 դեղանյութերի սինթեզի եղանակները:

2.Կլարողանա

Բրականացնել դեղանյութերի ինքնության և մաքրության որոշումը:

3.Կտիրապետի

Օրգանական նյութերի սինթեզի և բացահայտման եղանակներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Օրգանական նյութերի անջատումը և մաքրումը:

Թեմա 2՝ Ալկենների օքսիդացումը: *Թեմա 3՝* Ածխաջրածինների հալոգենածանցյալների փոխազդեցությունը հիմքի հետ:

Թեմա 4՝ Քլորոֆորմի պիտանելիության որոշումը: Փորձնական ճանապարհով իրականացնել. ա) օրգանական խառնուրդների հայտնաբերումը, բ) ջրի հայտնաբերումը քլորոֆորմի մեջ, գ) քլորաջրածնի հայտնաբերումը, դ) ազատ քլորի հայտնաբերումը: *Թեմա 5՝* Էթիլ սպիրտի օքսիդացումը քրոմային խառնուրդով: Էթիլ սպիրտի ինքնության որոշումը Էթիլացետատի առաջացմամբ: *Թեմա 6՝* Մեթիլ ալկոհոլի հայտնաբերումը փորձնական ճանապարհով: *Թեմա 7՝* Փորձնական ճանապարհով գլիցերինի ինքնության որոշումը: *Թեմա 8՝* Ֆենոլների հայտնաբերման որակական ռեակցիա: Գունավոր ռեակցիա երկաթի քլորիդի հետ: *Թեմա 9՝* Արծաթ հայելու ռեակցիան: Ալդեհիդների ռեակցիան ֆուկսինածմբային թթվի հետ: *Թեմա 10՝* Ացետոնի ինքնությունը որոշող փորձ: Յոդֆորմի փորձարկումը ացետոնի վրա: *Թեմա 11՝* Կարբոնաթթուների և նրանց աղերի լուծելիությունը ջրում: Թթուների ազդեցությունը ինդիկատորների վրա: Կարբոնաթթուների ինքնության որոշումը:

Թեմա 12՝ Կարբոնաթթուների և էթերների քանակական որոշումը: Ամինաթթուների որակական որոշումը: **Թեմա 13՝** Ասպիրինի սինթեզը երկու եղանակով՝ լուծիչով և առանց լուծիչի: **Թեմա 14՝** Սուլֆանիլամիդների որոշումը: **Թեմա 15՝** Պիրազոլի ածանցյալներ: Ռեակցիա երկաթի քլորիդի հետ անտիպիրինի և ամիդոպիրինի օրինակով: Անտիպիրինի և ամիդոպիրինի ռեակցիան ազոտական թթվի հետ: **Թեմա 16՝** Ալկալոիդներ: Ալկալոիդների ընդհանուր ռեակցիաներ: Ռեակցիաներ խինոնի հետ (նիկոտին կամ կոֆեին):

ԱՌԱՐԿԱՅԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
19. Առաջին միջանկյալ	0-4
20. Երկրորդ միջանկյալ	0-4
21. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

03/Մ 22. Դեղագիտական քիմիա-1 (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել դեղամիջոցների ստեղծման ժամանակակից եղանակները, դեղերի դասակարգման սկզբունքները, դեղանյութերի կառուցվածքի բացահայտման ժամանակակից եղանակները, դեղահումքի սինթեզի եղանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** ղեղագիտական քիմիայի ժամանակակից խնդիրները, ղեղամիջոցների հայտնաբերման հիմնական փուլերը, կծանոթանա կոմբինատորային սինթեզի տեսակներին,

2. **Կհասկանա** ղեղահումքի ստեղծման եղանակները և ղեղերի ստեղծման ու ներդրման ժամանակակից պահանջները,

3. **Կկարողանա** դասակարգել ղեղերը ըստ քիմիական և ղեղաբանական ցուցանիշների:

Բովանդակությունը.

N	Բաժինը, թեման	Պարապմունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնաշրջան	
Թեմա 1	ՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ		-	-	
	ԻԲաժին: Դեղագիտական քիմիայի առարկան և նրա անցած ուղին:	2			
Թեմա 2	Դեղագիտական քիմիայի ժամանակակից խնդիրները	4		-	Իմանա ղեղաքիմիայի առջև ծառայած ժամանակակից խնդիրները
Թեմա 3	Դեղապատրաստուկների դասակարգման սկզբունքները:	2			Տիրապետի ղեղերի դասակարգման եղանակներին
Թեմա 4	Դեղանյութերի ստեղծման ուղղությունները	8	2		Իմանա ղեղերի ստեղծման ժամանակակից մոտեցումները
Թեմա 5	Դեղաբանական ազդեցության կախվածությունը նյութի քիմիական կառուցվածքից, ֆիզիկական և քիմիական հատկություններից	4			Իմանա ղեղաբանական ազդեցության կախվածությունը նյութի քիմիական կառուցվածքից
Թեմա 6	Դեղանյութերի սինթեզի համար օգտագործվող ռեակցիաների տեսակները	8	2		Ծանոթանա սինթեզի հիմնական մոտեցումներին
Ընդամենը՝ 32 ժամ,		28	4		

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով

ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
